ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2015 թվականի N 133_Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՊԱՆԻ, ԳՈՐԻՍԻ, ՍԻՍԻԱՆԻ, ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 26_Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի կանոնադրության 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի օգոստոսի 3-ի N115-Ն հրամանը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաստատել՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի տարածքային գործակալությունների կանոնադրությունները՝ համաձայն N1, N2, N3 և N4 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2005 թվականի մարտի 1-ի «ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N26_Ա որոշումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2015թ. հոկտեմբերի 13
ք. Կապան